ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) –անձը հաստատող փաստաթուղթ- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), ինքնակենսագրություն (Ձև 5), այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձ փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճանների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14 փողոց, 14 շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0223) 3-28-51, (094) 40-03-32 հեռախոսահամարներով: